


THE
DICKRIS PUBLISHING CO.
NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿԵՐԸ ՔԱՑ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՑ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ր. ՏԱՐԻ, ԹԻՒ 75

ՆՈՒ ԵՆՈՐՔ, ՇԱՒԱԹ, ԱՊՐԻՂ 15 1899

ԳԻՆ 3 ՍԷՆՑ

Կուզանք Հայ Հասարակութեան
ծանուցանել թէ՛.

Չէյթուների նպատամատոյց Յանձնախումբն իւր Երեւոյթի աւուր նիստին մէջ աչքէ անցուց Չէյթուների ինպատարուած դերասանականներ-կայացումին մուտքի և ելքի հաշիւները, և գտաւ թէ՛ մուտքն եղած էր 255 տոլար, բացի մի քանի օթ-եակներու հաշիւներէն, և ելքը՝ 153 տոլար: Զուտ շահը կը մնայ 102 տոլար:

Նոյն հանդէսէն 26 տոլար և 54 սէնթ եկած է՝ վաճառուած ուտելիքներէն և խմելիքներէն, որուն կէսը Որբախումբ Ընկերութեան և կէսը Չէյթուներին կը պատկանի:

Ի Գիտաց Չէյթուների նպատամատոյց Յանձնախումբին:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ուաշինգթոնի մէջ գիւտնադիտական մարմինի պատկանող անձի մը կարծիքն է թէ՛ խաղաղութեան համաժողովէն նպատակուոր արդիւնք մը կրնայ յառաջ գալ միայն փոքր պետութիւններու համար. անոնք պիտի համաձայնին միջազգային իրաւարար ժողով մը կարգելու, որը լուծէ փոքր պետութիւններու մէջ ծագած դժուարութիւնները. սակայն մեծ պետութիւնները, որոնք աշխարհակարգի անդադրող ձգտումներ ունին՝ երբէք չպիտի համաձայնին եւ ընդհակառակն այդ ժողովէն պիտի փրթի ընդհանուր պատերազմի ահաւոր փոթորիկը: Նիւ Եորք «Սթընը» գիտել կուտայ թէ՛ Ամերիկայի կողմէն խաղաղութեան համաժողովին գրկուելիք ներկայացուցիչներուն մէջ նաւային պաշտօնեայն՝ նաւապետ Մաշան, որ աշխարհի ամենանշանաւոր նաւազէսն է, կը հատայ թէ՛ պատերազմի պատրաստութեան յարմարագոյն ժամանակը խաղաղութեան ժամանակն է: Գերմանիոյ ներկայացուցիչն մարմինի էն նշանաւոր անդամը կը հաւատայ թէ պատերազմը քաղաքակրթութեան կարապետն է, մշակն է: Երբ խաղաղութեան պատգամաւորներն այսպիսի դաւանանքի տէր անձեր են՝ ինչպէ՞ս կարելի է անոնցմէ յուսալ խաղաղութեան դաշնադրութիւն մը:

Խաղաղութեան ժողովին մէջ ծագելիք դժուարութիւններն արդէն կանխել սկսած են: Իսպաիայ հրահանգած է իւր ներկայացուցիչները որ առաջարկեն օրակարգի իրր առաջին խնդիր՝ թէ՛ ժողովը երբէք ի նըկատի չպիտի առնէ որ և է խնդիր որ արդէն որոշ համաձայնութիւններով ժամանակին վերջացած է: Գաղիայ պիտի պահանջէ որ Անգլիոյ եզրկատոսէն անմիջապէս ելլելը պահանջուի:

Ռուսիոյ նախարարութիւնն աւանց Զարին զիտութեան՝ կարգ մը կրթական նոր տնօրինութիւնները:

րեր և Փոլանոյի ունեցած քաղաքական առանձնաշնորհումներն ետ առեր է: Զարն այս բաները լսելով՝ սաստիկ բարկացեր է, և սկսեր է այդ խնդիրներն ինկատի առնել:

Լուր կայ թէ Զարին մայրը և Ս. Սինդրին գլխաւորները՝ Զարը գահընկեց ընելու և անոր տեղ Միքայէլ մեծ իշխանը կայսր հռչակելու դաւադրութիւններ ունին:

Ռուսիոյ կառավարութիւնն, որ չկրցաւ Չինաստանի մէջ ուզած խաղերը խաղալ քաղաքական օրինաւոր միջոցներով՝ սկսած է իր դաւադրական միջոցները գործադրել ճիշդ այնպէս ինչպէս որ Թիւրքիոյ ըրաւ: Հիմա սկսած է շատ մը Չէրքէզներ զրկել Չինաստան՝ իբր գաղթականներ, որոնք իրենց սովորութեան և իրենց բարքերուն համեմատ հոն՝ Չինաստանի մէջ՝ սկսեր են աւազակութիւններ, աւարառութիւններ և սպաննութիւններ ընել: Անոնք մինչև իսկ Եւրոպացիներու վրայ կը յարձակին, կը կողոպտեն և կսպանեն: Արդիւնքն այսպէս է: Չինաստան բացէն իրաց աւազակութիւններու, աւարառութիւններու և խառնակութիւններու թատր պիտի դառնայ, կառավարութիւնը կարող պիտի չըլլայ զսպել այս քարագործութիւնները, պիտի չուարի՝ գլուխը պիտի կորսցունէ, երկրին ներքին վիճակը խառնակութեանց քառսի մը պիտի վերածուի, և հետեանքն այն պիտի ըլլայ՝ որ Չինաստանի խնդիրը Թիւրքիոյ խնդրին ճակատագրը պիտի ստանայ:

Վերջերս Կ. Պոլսոյ միջկիրներուն մէջ թիւրքերէն շրջաբերականներ թափուած են, որոցմով կոչուած կըլլայ բոլոր բարեպաշտ Մուսուլմաններուն՝ որ միանան և Սուլթան Համիտը գահընկէց ընեն:

Վերջերս Անգլիոյ և Գաղիոյ մէջ վերջնական համաձայնութիւն գոյացեր է եզրկատոսի մէջ վէճի առարկայ եղող երկիրներու մասին: Երկու պետութիւններուն ալ գրաւելիք տեղերն որոշուեր են և դաշնադրութիւնը կնքուեր է:

Իտալական մարտնաւ մը ճամբայ ելած է երթալ և գրաւելու Չինաստանէն արդէն պահանջուած նաւահանգիստը:

Կըսուի թէ Չինաստանի մէջ Անգլիոյ և Ռուսիոյ մէջ այնպիսի համաձայնութիւն մը կատարուեր է, որպիսին տեղի ունեցաւ Անգլիոյ երկրորդ միջև Աֆրիկայի մէջ:

Երկար ասենէ իվեր էր որ Սամոյ կղզւոյն թագաւորական գահին երկու թիկնածուներուն մէջ պատերազմ կը մղուէր, որոց մին Անգլիոյ և Միացեալ Նահանգացոյ՝ ու միւսը Գերմանիոյ կողմանէ կը պաշտպանուէին: Առաջիններուն պաշտպանածը վերջերս գահակալաց: Վերջինի պաշտպանածին հետեւողները երէկ իբր 800 հոգի յարձակուեր են 100ի չափ անըլուացի և ամերիկացի նաւաստիներու վրայ և սպաններ են երեք պաշտօնեայններ ու չորս նաւաստիներ:

ԱԶԳԱՅԻՆ ԿՈՉ ՄԸ

Ինչպէ՞ս անաւարբեր մնանք. ինչպէ՞ս աչքերուս առջև չբերենք վանի հայերուն ներկայ սրտամտիկ պատկերները: Հազարներով անօթութենէ հալ ու մաշ՝ կիսամեռ կմալքներ կերան վանի մէջ: Սովմամհ կ'ըլլան՝... հարիւրաւոր կեանքեր, պըլպըլացող կանթեղներու պէս, կը մարին իրարու նուէ՛ պատառ մը չոր հացի չզոյուցենէն: Մէկ տոլար՝ էն քիչ օրավարձով աշխատող գործաւորի մէկ օրականը՝ վանի մէջ կեանք մը կրնայ փրկել: Ամեն սիրտ ունեցող հայու առջև կը կենան այդ սպրբելու իրաւունքն ունեցող եւ անբաղդօրէն մահուան դատապարտուած մեր սիրելի հայրենակիցներուն հոգեւարք կմալքները, և աղելարը ձայնով մը օգնութիւն կը մրմնջին: Չէյթուների անօթիւններն ի նպատակաւ հանգանակութենէն շատեր ձեռնպահ մնացին՝ առարկելով թէ «Անոնք թիւրքերն զէ՛մ շատ անգամ զէնք վերադարձեր են, և եթէ հայ ունենան ու սպրիւն, օր մը նոյնը պիտի կրնան» և ուստի քաղաքական պատճառներով՝ անոնց օգնութեան ձեռք մը երկնցունել զլացան: Հիմա առիթը եկած է որ յիշեալ պարագային ձեռնպահ մնացող մեր հայրենակիցները ցուցնեն թէ՛ իրենց առարկութիւնը փոխուեստի ճամբայ չէր: Որովհետև վանի ժողովուրդը անցեալ ջարդին առնեն 20 հազարներով ջարդուեցաւ գառնուկի պէս վիզը երկնցունելով. անոնց համար նոյն իսկ Պօլսոյ մէջ հանգանակութիւն բացուեր է. թերթերուն մէջ ալ գըրամ տուողներուն անունները կը հըրատարակուին: Ուստի պատճառ մը չկայ որ Ամերիկայի հայերն անոնց օրինակին չը հետևին:

Տիրա Տիգրան Գէլէկեան, որ ամեն ազգօգուտ ձեռնարկներու միշտ մասնակցած է, որ Չէյթուների հանգանակութեան ալ իր կարողութեան չափով նպաստեց, հիմայ 20 տոլար կը խոստանայ ի նպատակ վանի սովելոց: Եթէ նոյն համեմատութեամբ մեր Նիւ Եորքի հայ հարուստները Տիրաք Կիւլպէնկեան, Մինասեան, Գարակէօգեան, Թալաւանեան, Գազանեան, Ալեօն և այլք իրենց քըսակներուն բերանները բանան՝ կրնան առանց մեծ զոհողութեան՝ 50, 100 մինչև 500ական տոլար տալ:

Ուրախութեամբ կը տեղեկանանք թէ Նիւ Եորքի «Հայոց Բիւրֆօն»-ի ընկերութիւնն արդէն գործի սկսած է՝ ի նպատակ վանի սովելոց. սակայն անոնց գործը գլխաւորաբար Ամերիկացիներու մէջ է. վստահ ենք որ եթէ զուտ Հայկական յանձնախումբեր կազմուին, որոնք ամեն տեղ ձեռնարկեն ողողական հայոց մէջ հանգանակութիւն ընելու, արդիւնքը բոլորովին տարբեր պիտի ըլլայ:

Այս առթիւ կրկին աչքերնիս մեր հոգեւոր առաջնորդին վրայ կը դառնայ. նա է միակ անձը որ կոչուած

և յարմարութիւն ունի պահանջուած կազմակերպութեան նախաձեռնարկն ըլլալու: Սրբազանն ինք կրնայ վանի սովելոց նպատամատոյց Յանձնախումբեր կազմել, Նիւ Եորք եւ ուրիշ քաղաքներ, և զանոնք գործի մղել:

Տնանալու ժամանակ չկայ. սովել իր նախճիրները կը կատարէ, իր զօհերը կառնէ կը տանի՝ առանց սպասելու որ մենք օր մը ելլենք և օգնենք:

Չէյթուների յանձնախումբերն այս տարիին համար իննցը գործերը կատարած են, հարկ է որ շուտով ուրիշ յանձնախումբեր ընտրուին ինըպատակ վանի սովելոց հանգանակութիւններ ընելու:

Կը կրկնենք: Ամերիկայի հայերն անմիջապէս գործի մղելու համար ուրիշ ձեռք մը չենք տեսներ բացի Սրբազանէն: Ուստի խոնարհարար կուզանք թելադրել որ Գեր. Յովսէփ Եպիսկոպոսը իր դատած յարմարագոյն միջոցներով ձեռնարկէ օր առաջ կարևոր գումարներ յառաջ բերելու եւ իր յարմար դատած միջոցով՝

ՏԵՂԱԿԱՆ

Երեւոյթական կառքին զոհ գացող երիտասարդ Ստեփան Նաճառեանի թաղումն անցեալ օր մեծ շքով տեղի ունեցաւ: Ուէսթ Հուպըրնի գերեզմանատան մէջ: Բացի բոլոր Հայ գործաւորներէ՝ Ամերիկացի խուռն բաղմութիւն մը հետեւած են դազաղին: Յուզարկաւորութեան ինփորին առջև կերթար ընտիր երաժշտական խումբ մը: Մաղկապսակներով լեցուն կառք մը մեռելակիր կառքին կը հեծուէր: Գերեզմանատան մէջ Տ. Թ. Չարչաֆեան դամբանական մը խօսած է:

Տեղական երիտասարդներ խիստ յուզուած ու տխուր՝ ցրուած են:

Պրայթի չուանի գործարանին մէջ լեցուն սնուկ մը ինկեր է Հայ գործաւորի մը վրայ, խեղճ մարդը բոլորովին ճգմուեր՝ և հիւանդանոց փոխադրուելով՝ քանի մը ժամէն մեռեր է:

Քաղաքի մէջ միլիոնատէրի մը տունը հրդեհ առաւ անցեալ օր, որուն մէջ այրեցան միլիոնատէրը, իր կինը, զաւակները և սպասաւորները. ընդ ամենը 13 հոգի:

ԱԶԳ

Վերջ փողոցի Ս. Բարթողիմէոս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան կաճառը տեղափոխուած և աւելի հաստատ հիմերու վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 Յրդ Ալեիւ 33 և 39րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8էն 10ը:



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱԿԱՆ
կը հրատարակուի մէջն Շարաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Գ. Պ. ՉԻԹՃԵԱՆ - - - - Խմբագիր

ՐԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ
ՏԼ. ՍՅ. Տարեկան 10 Փրանք.
Տարեկան 1 50
Վեցամսեայ 75
Յոսամսեայ 40

Մտար կամ նամակ ուղղել հետեւեայ հասցէին՝
To the DICKINS PUBLISHING CO., 301 East 34th St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԳ, ՇԱՐԱԹ, ԱՊՐԻԼ 15, 1899.

ՄԵՐ ՄՏՔԵՐԸ ՄՆՈՒՑԱՆԵԼՈՒ ԵՆԻՔ

Բնութեան մէջ ամեն աճում ունեւող առնելով կըլլայ: Նոյնը ճշմարտ է նաեւ մտքին համար: Այն մտքերը որ մտածելու և ուսանելու միջոցով չեն սնանիր, այն մտքերը որ կարողաւու և յոկու միջոցով ուրիշներու մտքերուն արտադրութիւնները չեն ընդունիր, զանոնք չեն մարտեր, անոնցմով չեն զարգանար. անոնք կը մնան նիւտար, սկար, խեղճ և անպէտ: Ընդարձայն իր խոզերը պարտաւարանելու օրքան հոգ և խնամ կը տանի. սակայն մարդիկ կան որ իրենց մտքերը զարգացունելու մասին խոզ մը զիր-ցունենելու շարի իսկ չեն մտածեր: Անոնք երբ տեսնեն մէկը որ իր ձին, իր եզը, իր գոմէշը, իր խոզը դատարկ մտարի վրայ կը կապէ օրերով՝ զայն յիմար կը կռչեն. սակայն ինքզինքնին երբէք չեն մեղադրեր՝ որ օրերով, ամիսներով, տարիներով իրենց ամբողջ պարտաւոր ժամերը Տա-մա, Թուրքի և Թաւրիս խողարով, կամ անպէտ խոտակցու-թիւնները ընկող: Անոնց խելքին կը պառկի որ եթէ խոզը քանի մը փառնա միս և ճարպ աւելի կապէ՝ մտավա-սին քով քանի մը սէնթ աւելի կարծէ, սակայն երբէք չեն խորհիր թէ՛ իրենց անձն այնքան աւելի արժէքաւոր պիտի ըլլայ, որքան ընթերցանութեամբ պարտաւոր, քի-օգտաշատ ստենախօսութիւններ լսելու հետամտին: Ո՛րքան մարդիկ կան, որոնք աւելի կ'ընտրեն քանի մը գէլը խոզ ունենան, քան թէ զարգացած և հարուստ միտք մը: Երբ կ'արժէ մշակուած միտքը՝ չեն ըսեր շատեր: Ա-տար համար չէ՞ որ ինչ կարծէ մեր կեանքը, ինչքան խեղճ ու ողորմելի է մեր վիճակ: Մտքի ունայնութիւնը չէ՞ շատերուն բոլոր թշուառութեան, անյաջողութեան և ճարտարութեան ճարտարութիւնը զաւազվիծելուն պատճա-ռը, որոց կերած հացը ստուպալք. հանդերձն՝ անլծք, շնչած օդը՝ առգնապ և խմած ջուրը վիշտ է: Բնութեան մէջ ամեն բան պատճառէն արդիւնքի կերթայ: Անանկ ալ մարդկային կեանքի բոլոր արտադրութիւնները մտքի և խելքի ծնունդ են. աղքատ մտքին արտադրութիւնը, աղ-քատ և ողորմելի խելքին արդիւնքը ողորմելի կըլլան: շատեր շատ բաներու կը փափաքին, սակայն բանի մ'ալ չեն հասնիր, որովհետեւ մտքերին սկար մնացեր են, մտքի ուժ և զօրութիւն չեն ստացած, իրենց կեանքին վայրա-շարժը կեցած է, չ'ընտրիր, որովհետեւ ուսումն կրողը հոն չի վառիր, յաջողութեան շագին, յառաջդիմութեան մղումը չունին:

Կուզե՞ս կենացը ընթացքին մէջ դժուարութիւններն արհամարհելով յառաջ ընթանալու ճար գտնել՝ մշակել՝ միտքդ, կրթել՝ բարքդ՝ զարգացուր զիտակցութիւնդ: Կե-նաց ճարտար մէջ որքան յառաջ երթաս, այնքան աւելի մեծ դժուարութիւններ առջևդ պիտի բարձրանան: Ետտը համար յարտաւ ուսանելու և միշտ մտքիդ ոյժը կրկնա-պատկելու պէտքը պիտի ունենաս:

Մեր ազգային ձգտումներու յաջողութիւնն ալ նոյն-պէս կախում ունի անհասարակ ստանալիք մտաւոր զար-գացման հաւաքական ուժէն: Իմաստուն հայրենասիրու-թիւնը ամենուս վրայ պարտք կը դնէ որ մեր ստաջադ-րած նպատակին հասնելու համար՝ ինքզինքնին ոյժ ընենք: Դարերու ընթացքին մէջ գիտութեան անդիմադրելի հո-սանքն է եղեր այն զօրութիւնը, որ քանդեր, քեր, տա-րեր է ազիտութեան և բռնութեան կանգնած թուժերը: ՏԻԳՐԻՍԻ ընթերցողները տեսան թէ նոյն իսկ պարզ օդը հակոյ մեքենաներ շարժելու չարի ահագին ոյժ մը կըլլայ՝ այն ինչ վիճակին ենթարկուելով. անանկ ալ պարզ միտքը հրաշալի արդիւնքներ յառաջ բերելու գիտքին կը հասնի՝ երբ յարտաւ կ'ստանայ գիտութեան սնունդը: Ընտրելով միտք ունենալով մտաւոր չըլլար, սոսկ խելք ունենալով խելացի չի կոչուիր, միայն բանական ըլլալով բանգէտ չի համարուիր, այլ՝ ստեղծելու, հրաշագործելու և յաղթանակելու այդ բարձրութիւններուն կը հասնի՝

տաւոր զարգացումը չընտանի մէջ մտնելով: Մեր ազգա-յին ազատութեան ստեղծագործութիւնը և յաղթանակը կատարելու համար, այն բանը որ ամեն մարդ կրնայ ընել, է՝ ինքզինքն օրքան զօր առաւել կարեոր ոյժ մը ընելը՝ մտայնի, խելացի և բանգէտ ըլլալու վերայ շեշտը շեշտելով: Մեր մտքերը սնուցանենք:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Գաղղիոյ նոր նախագահին ընտրութեան ի վեր՝ ալ և Տրէյֆուզի խնդիրը մ'եռած և յաւիտենապէս թաղուած կերեւար, սակայն բորբոքուող հրաբուրդի մը պէս կրկին սկսեց դուրս ցատկել, և կառավարութեան, մամուլին ու ժողովուրդին ամենէն հրատապ խնդիրն է այսօր՝ նո-րէն: Նորանոր վիպաութիւններ Տրէյֆուզի անպարտու-թիւնը կը հաստատան գառակայն խառն ժողովին առջև, կը ցուցնեն թէ այն դաւաճանութեան ամբաստանութիւննե-րը որ, այսպէս կոչուած, սոկուժաններով Տրէյֆուզի վե-րագրուած էին 1894ին, անոնք արդէն 1890ին Պոլսոյն ա-նուն դաւաճանին միջոցաւ յայտնուած էին օտար կառա-վարութեան մը, թէ զաղանիք կոչուածները հասարա-կաց ինչքեր էին, թէ հմուտ թնդանօթածիք մը գիտա-կան մեծ սխալ մը գործած պիտի ըլլար, այսպէս կոչուած, դաւաճանութեան թուղթերուն մէջ՝ փոխան «Հայաբնու-մէյթիք»-ի «Հայտարարութեամբ» բառը գործածուելով, որը Տրէյֆու-զի պէս հռչակուող թնդանօթածիք մը չը պիտի ընէր: Այս և այս կարգի շատ մը գիտական հակասութիւններ մատնանիշ ընելով՝ Տրէյֆուզի դէմ բերուած թուղթե-րուն մէջ կ'ապացուցանեն թէ անոնք կեղծ են: Կ'ըսուի թէ կին մը Փարիզ եկած է Տրէյֆուզի պաշտպան թերթի մը ծախելու ստգուման մը, որով էսով ըրչայզի կը իտո-սովանի թէ՛ Տրէյֆուզի դէմ բերուած կեղծ ամբաստա-նագիրներուն հեղինակը ինքն է: Գիտնալու է թէ էսթրոյ-զի կրկին Գաղղիոյն փախչել է: «Փիկար» թերթը յայ-տարարած է դատարանի առջև բերուած այս յայտնու-թիւնները, ասոր համար այդ թերթին տէյն ու խմբա-գիրը հինգ հարիւրահարմ ֆրանքի տուգանաց դատապար-տուած են: Կ'ըսուի թէ նախարարական Տրիֆուզի յայտա-րարելու առած է «Փիկար»-ին այդ յայտնութիւնները՝ հա-տարակց կարծիքը պատարտելու՝ որ երբ դարուս ամե-նէն անձինն դաւաճարութիւններուն երկու զոհերը անպարտ արձակուին՝ յանկարծակիս իրարմեջմտնելու չը պատահին:

Այդ նոյնիկ Տրէյֆուզի երդուելով թշուալները սկը-սեր են անոր ինպատակ դիրք բռնել: Ետտ՝ որովհետեւ «Տըլ-մարտութիւնը» որ կը հարածուի՝ բայց չի փախչիր, կ'ըսով բայց չի թագչիր», սկսեր է իր լոյս երեսը փայլեցունել: Ուստի խաւարին որդիքը ստիպուած են զիմակնին փոխե-լու: Երկրորդ՝ որովհետեւ կը տեսնեն թէ արդարութիւնն ի հանդէս կուգայ յաղթանակած. ուստի ամեն ո'վ որ անոր դէմ մտքառելու յամառութիւնն գործէ՝ պիտի խորտակ-ուի: Երկրորդ՝ կը տեսնեն թէ Տրէյֆուզի խնդիրը լոկ դե-ւերու կղզիին մէջ անպարտ սեղը ամառուող անձի մը խնդիր չէ, այլ ամբողջ ազգին պատիւը մարմաղ կրակի վրայ կը ճնն ճնրի աշխարհի առջև: Զօրորոգ՝ կը տեսնեն թէ՛ եթէ Տրէյֆուզի ամօթալի խնդրովն Գաղղիոյ պատի-ւին քուտած արատը չ'մտքերն՝ 1900ին արուեստաշանդէան անյաջողութեան պիտի դատապարտուի: Մէկ կողմէն Գաղ-ղիոյ արդարախոս քաղաքայիններն արդարութեան յաղթա-նակին փառապանծ դրօշին ծալքերը կը տարածեն ամբողջ Գաղղիոյ վրայ, միւս կողմէն արդարութեան դաւաճանները իրենց բոլոր կառավարական, իրեկտիւն և զինուորական հակոյ ուժերովը զինութեան կըլլան: Արդարութիւնը խեղճ և անպաշտպան, լքեալ ու անոք Տրէյֆուզի մը դատն այնքան աներեւակայնի վճարութիւններու մէջէն յաղ-թութեան կը տանի:

Այս երեւոյթէն յոյսի նշոյլ մ'ալ մեզի կը ծագի: Հա-ւատայնիս կուգայ՝ թէ մեր ազգային դատի արդարու-թիւնն ալ օր մը յաղթանակը պիտի տանի՝ այսպէս: Միայն թէ արդարութիւնը ինքնիրեն բան մը չկրնար ընել: Եթէ Տրէյֆուզի դատին համար աշխատող Զօրա մը և իր փոք-րակի հետեւորդները չունենար՝ արդարութիւնը խօսք կը մնար: Անանկ ալ եթէ մեր ազգային դատին համար աշ-խատողներ չըլլան՝ մեր դատին արդարութիւնը կը մնայ այն «արդարութիւն»ը, որ թիւրք կառավարութեան բա-ռարանին մէջ կը գտնուի: Արդարութեան յաղթանակին նուիրուած Զօրան եթէ միս միտակ՝ կառավարութեան, բանակին, իրադրութեան և մոլեռանդ խոստանին սպառ-նալիքներուն և յարձակումներուն դէմ կանգնելու քաջու-թիւնն ու անձնուիրութիւնն չունենար, արդարութիւնը կը մնար խախտուած: Ինչ են երկաթեայ այն բարակ թե-լերը, որոնցմէ ելեքտրական ահաւոր ուժերու հոսանքներ կանցնին: այնպէս ալ շատ անգամ արդարութեան յաղթա-նակի միջոցներն՝ այդպէս աննշան և շեշին նկատուած բա-ներ են: Հրաշքներ կը կատարուին՝ բազմաթիւ միջոցնե-րը անոնց առջև կեցող ահաւոր ընդդէմութիւններուն և ձեռք բերուած յաղթանակներուն հետ: Հայերուս դա-տին արդարութիւնն ալ՝ հակառակ ներկայ զարհուրելի

արգելքներուն՝ յաղթանակը պիտի տանի եթէ գտնուին հայեր որ քա-ջութեամբ, խելացութեամբ և անձ-նուիրութեամբ միջոց ըլլան արդա-րութեան ձայնին և պահանջներուն: Վերջերս աշխարհ յոյսը կտրած էր Տրէյֆուզի խնդրէն. և ինչ որ մե-զի այժմ խրատայ կը ներշնչէ՝ այն է որ, արդարութիւնն աշխարհի խո-տակուած յոյսերու աւերակներու մէ-ջէն վեր կը բարձրանայ յաղթանակն: Վերջի պահուս հառազիր մը լուր կը բերէ թէ՛ ինչպէս որ Գնդապետ Հէնրի ինքզինքն սպաննելու Տրէյֆու-զի դէմ հեղինակած խարդախ գրու-թեան համար խղճահար ըլլալով՝ ա-նանկ ալ գնդապետ Հէնրիին այն ա-տենի քարաուղարը ինքզինք կ'սխը-րէ, որովհետեւ Տրէյֆուզի խնդիրը քննող դատարանի կողմէն հրաւիր-ուած էր քննուելու, որը տեսնելով թէ այդ խարդախ գործին մէջ իւր մեղսակցութիւնն ալ երևան պիտի ելնէ, իր կեանքին վերջ տուաւ: Խարդախին, դաւաճանին ու անի-րաւին ապահովութիւնը միշտ կէտ մըն է, որմէ անդին՝ փորձանքը, պա-տիժը և անողք վարձատրութիւնը վրայ կը հասնին:

Այս և այս կարգի շատ մը գիտական հակասութիւններ մատնանիշ ընելով՝ Տրէյֆուզի դէմ բերուած թուղթե-րուն մէջ կ'ապացուցանեն թէ անոնք կեղծ են: Կ'ըսուի թէ կին մը Փարիզ եկած է Տրէյֆուզի պաշտպան թերթի մը ծախելու ստգուման մը, որով էսով ըրչայզի կը իտո-սովանի թէ՛ Տրէյֆուզի դէմ բերուած կեղծ ամբաստա-նագիրներուն հեղինակը ինքն է: Գիտնալու է թէ էսթրոյ-զի կրկին Գաղղիոյն փախչել է: «Փիկար» թերթը յայ-տարարած է դատարանի առջև բերուած այս յայտնու-թիւնները, ասոր համար այդ թերթին տէյն ու խմբա-գիրը հինգ հարիւրահարմ ֆրանքի տուգանաց դատապար-տուած են: Կ'ըսուի թէ նախարարական Տրիֆուզի յայտա-րարելու առած է «Փիկար»-ին այդ յայտնութիւնները՝ հա-տարակց կարծիքը պատարտելու՝ որ երբ դարուս ամե-նէն անձինն դաւաճարութիւններուն երկու զոհերը անպարտ արձակուին՝ յանկարծակիս իրարմեջմտնելու չը պատահին:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՍՐԻՆԳ



ԿԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ
ՆԻ ԵՎԵՐ, 1899
Հատար Ա.

Կը պարտնակէ 256 երեւներ և 16 գեղեցիկ պատկերներ: Տպուած է խիստ ընտիր թղթի վրայ և փառա-ւոր կերպիւ կողմուած: Գիներն են. Թղթակազմ (առանց պտուկ) 50 Ալէնթ Լաթիկազմ — 75 Կաշեկազմ — 1.00 Տօլար Գիներն կանխիկ են: Մեծ քանակութեամբ գնողներու համար մասնաւոր գեղջ կայ: Գրեւ և դրամ կամ ծրար զեր-կել առ. H. Eguinian, 146 East 23d St., New York City.

ՄԱՀԱԳՈՅԺ

«Ոչ ոք բռնու... Սա աղին Պատենք սիրաբար արտաբերին...

Ապրիլ 1. Իցի՛ւ թէ խարուած ըլլայինք... Բայց, ափսոս, զի սղարալի իրականութիւն մ'էր...

«Կուզէի քանի մը տարի ևս ապրիլ ծնողացս, ազգիս և մարդկութեան օգտակար պիտի ըլլայի դեռ...

բայց, ա՛խ, Աստուած զարկաւ զիս, քիչ մը շուտ զարկաւ... այսպէս կ'ըսէր իւր հօրեղբոր ու մօր՝ դեռ քանի մը օր առաջ...

«Մայրիմ կերթամ... հա՛ն կանցնիմ Յորդանանէն...» Եւ մինչ վշտահար մայրն իր սիրելոյն անշնչացած դիակին փարած հեղձամղձուկ կարտատուէր՝ նա արգէն անցած... էր, եւ խորհրդաւոր Յորդանանի ալիսող ջուրերն անգամ մը ևս երկուքի բաժնուեցան՝ ուղի բանալու մեր յոգնած ճամբորդին, որ գնաց հոն՝ ուր «ալ ցաւ կամ վիշտ չկայ»։

Յ. Մ. ՍԻՐԱԿԱՆՆԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿՍԵՆ ԺՈՂՈՎ

Ի ՓՐՕՎԻՏԵՆՍ

Մարտ 31, Փրովիտենս.

Անցեալ կիրակի երեկոյ տեղւոյս Հնչ. մասնաճիւղը Հրապարակային ժողով մը ունեցաւ, ուր անեմախոսեցու համար մասնաւորապէս հրաւիրեալ էր Նիւ Եորքէն Տիար Գ. Չիթ-ճեան։ Բացի անկէ ասեմախոսեցին նաև Տիար Գ. Սուրէնի և Պատ. Մարգարէտեան։ Պ. Սուրէնի նիւթն էր «անհատին ուժը», որը շատ գեղեցիկ կերպով բացատրեց թէ ինչպէս հաւաքական հսկայ ուժերը անհատներու պարսաճանաչ գործունէութենէն յառաջ կուգան։ Պատ. Մարգարէտեանի նիւթն էր «Հաւատք», որը այնքան բնորոշ կերպով ցուցուց թէ յեղափոխականները իրենց անվճար և զոհարար կեանքով ինքզինքնին Բրիտանիայ կոչողներէ շատ աւելի հաւատք ունին, եւ այն հաւատքըն է որ զիրենք կը զօրացունէ ահաւոր անձնութիւններ կատարելու։

Տիար Չիթճեանի նիւթն էր «Ազգին ուժը»։ Յուշուց թէ՛ աշխարհի մէջ մարդը երկրորդ արարիչ հանդիսացած է, թէ՛ գիտութեան բոլոր հիմնալի արտադրութիւնները մարդուն ստեղծագործութիւններն են, թէ՛ ազգեր՝ այդ անհատներու հաւաքական ուժերը՝ ինչ հրաշքներ կատարած են։ Յիշուց ըստ. «Եթէ մանանիկի հասի չափի հաւատք ունենաք և այս լեբան ըսէք, ելլի՛ր ու ծովը լինկիր՝ պիտի ըլլայ»։ Այդ խօսքը անշուշտ նիւթական լեռներու համար չէր, այլ այն գծուարութիւններու մասին, որոնք ազգերու կուրծքերուն վրայ լեռներու պէս ծանրացած են։ Երբ ազգ մը ազատ ըլլալու կամքով և յողթանակի հաւատքով կըսէ այն լեռներուն որ շարժին, երթան և ծովը լինան՝ կըլլան։ Ըստ թէ՛ ազգերու կեանքին մէջ ինչքան այսպիսի հրաշքներ կատարուած են. հրահանգեց որ համեստ ըլլանք, ցուցամու չըլլանք, ժողովուրդն իր ցոյց սիրելովը չփախուիք ցուցամուտութիւնը. գիտակից ըլլանք մեր ազգային ուժին, այն ուժին՝ որ վերջերս այնքան գերի ազգեր ազատեց, և մեր ալ ազգային ուժերն իրենց փրկարար պաշտօնը կատարեն։

Ժողովուրդաբան լի էր երկսեռ խուռն բազմութիւնով մը. այդ մեծ արահին մէջ շատերուն նստելու տեղ չի կար։

Տիկին Պէրպէրեան խիստ քաղցրալուր ձայնով մը երգեց ազգային

երգ մը, որուն ձգած տպաւորութիւնն ամենուէն վրայ շատ սիրելի էր։ Փրովիտենսի ժողովուրդի ամեն կարգի անհասներ խիստ գոհ մնացին այսպիսի լուրը և խոհուն յեղափոխական ժողով մը տեսնելով։

ՌՈՐՈՍ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

«Մշակ»էն կիմանանք թէ՛ Անգլիոյ Թագուհին իրեն պատուակուտան Երէջ կարգած է Ամենապատիւ Իզմիրլեան Արքեպիսկոպոսը։

—Պարբերագէտ գրուած նամակէ մը կիմանանք թէ՛ Ռուսք կառավարութիւնը փակեր է ռուս Մէգրէի Գերմանական օրբանոցը։

—Հայաստանի մէջ օտարներու ձեռքով բացուած այն օրբանոցները, որոնք կառավարութեան կողմանէ փակուած են՝ իբր թէ արածուած չեն առած չըլլանուն համար, սրբերն առ ժամանակեայ կերպով բնաւ փակուած մէջ կը պահուին մինչև անհուն թէ՛ ինչ կրնան ընել։

—Սրբազան Պատրիարքը չըջարեալակնով մը շնորհակալութիւն կը յայտնէ այն ամեն օտարագրներուն, որ ձեռնարկեր են հայ սրբեր խնամելու գործին. միայն կը խնդրէ որ սրբերը չայլական պատխարակութիւնով կրթուին և թողուտութիւն ունենան մայրենի երկուցիր յաճախելու։

—Ուէսթ Մինիսթրի գումարը ազգու շրջաբերականով Բրիտանիայ աշխարհի խղճին կոչում ըրած է, որ փութան Հայաստանի սովակարներուն նպաստ զրկելու։ Կրէ՛ թէ անուսուղի մէկ միլիոն Փրանքի անմիջական պէտքեր կայ, որով կարելի ըլլայ հայերն անօթի մեռնելէ փրկել։

—Ռուսահայ թերթի կիմանանք թէ որբեր խնամելու գործին համար Պաքու մէջ 30,000 բուսովի հանգստեակուած է։

—Պօղոս Փաշա Նուպար 500 եգիպտական ոսկի Ալեքսանդրիոյ քաղաքակառուցութեան յանձնած է՝ ազգասիրտուն բաժնելու համար. աւելի առաջ ալ Ալեքսանդրիոյ թաղ. խորհրդայն միջոցաւ գաղթական ազգայնոց պատասխարման համար հազար ոսկի սուած էր։

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ե Ր

Կ. Յ. Յրէզնո—Ստացած ենք։ Հին թերթերէն չուենինք։ Հայկական Գրադարան—Այդ գիրքը վեհնախի ապուած չէ։ Աւելորդ օրինակներ չուենինք։

Մ. ԹԱՇՃԵԱՆ

251 վիլլիւմ Ըսթրիտ Նիւ Եորք ԿԸ ՎԱՃԱՌԻ



Փառակազմը 1.00, Լաթակազմը՝ 75, Թղթակազմը 50 սէնթ։ Կը վաճառէ նաև Բաֆֆիի գրքերը՝ սովորական գներով։ Դիմել յիշեալ հասցէին։

ԱՉԻ

«Սրինգ»ը կը ծախուի նաև Թ. Չարչաֆճեանի քով։

Դիմել, 513 Ըսթրիտ Ըսթրիտ, Ուէսթ Հոպքըն Նիւ Ճէրզի.

Ս. ՏԱՄՊՈՒՐԱՃԵԱՆ ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

509 2րդ Ապրիլ, 28 և 29րդ Փողոց։

Եթէ Երբ տարիներէ իվեր հաստատած խանութիս մէջ գտած յաջողութիւնովս՝ կարող եմ շատ լաւ ապրանքներ տալ շատ աժան գնով՝ համոզուած ըլլալով թէ՛ ապահով շահին գլխաւոր միջոցն է յաճախորդը գոհ ընել։ Եթէ մեր ապրանքները գոհացուցիչ չըլլան՝ վճարուած գումարը ետ կը դարձունենք։ Մեր քով կը գտնուին ամեն տեսակ բանջարեղէններ, պտուղներ ու կերակուրի վերաբերեալ տեղական կամ Արեւելեան ամեն կարգի նիւթեր, թիթեղեայ տուփերով կամ առանց տուփի։ Մեր գներու մասին հետեւեալ նմոյշները կուտանք։ Պուլտրո փառուտը 4 սէնթ. 25 փառուտն աւելի գնողին համար 3½ սէնթ։ Մեծած փառուտը 4 սէնթ, գէյթուն՝ 10 սէնթ, 10 փառուտէն աւելի գնողին համար 9 սէնթ։ Մաքուր ալիւրի հացին մէկը 3 և երկուքը 5 սէնթ։ Կաթ ըզրթը 3 սէնթ։ Հայկական գէյթունի իւղ, կորկոտ, կանանչ գէյթուն, պամեայ, Փըստըխ, լէպլէպի, Այնթէպ հալվասի ևն. կը վաճառենք. մեծ քանակութեամբ գնողներուն կարևոր գնիք ընելով։

Նամակով յանձնարարութեան համար գիմել վերայիշեալ հասցէին։

ՄԻՀՐԱՆ ԽԱՐՈՒԹԵԱՆ M. Harpootlian, P. O. Box, Worcester Mass.

Մեր տան սեղանաւորական ճիւղը՝ իր ձեռամբ դրակողներէն գնահատելի կերպով քաջալերեալ՝ պարտք կը սեպէ յայտարարել թէ՛ մենք ևս պէտք եղած գոհուողութիւնը չենք զլացած գործին միշտ ապահով միջոցներ յառաջ բերել, որպէս կ'ապացուցանէ մեր անցեալ տարիներու գործունէութիւնը։ Հայ ժողովրդը՝ ես և մասնաւորապէս մեր տան անձնութիւններուն իրական վստահութիւն ստալու համար պէտք է յիշել թէ՛ ՅԱՐՈՒԹԻՆ ԵՒ ԵՂՅԱՐՈՒԹԻՆ ԱՆՆՈՒՄ ԵՒ ԵՂՅԱՐՈՒԹԻՆ ԱՆՆՈՒՄ 10,000 օսմ. ոսկւոյ անշարժ ստացուածքը իր սոյն փոխանակագրի գործոյն երաշխաւորութիւնըն է, յաշտ անոնց որոնք կուզեն դրամին վստահելի միջոցով զրկել։ Ուստի կը յուսանք թէ՛ հայ հասարակութիւնը չ'պիտի վարանի իբրև ապահովագրոյն միջոցը՝ մեր ձեռամբ զրկել իւր դրամը, որ կրնանք փոխանակագիր տալ Խարբերքի, Տիգրանակերտի, Բիլի, Բալուի, Բերլիի, Մալաթիայի, Սևազի, Կ. Պօլսի, նաև Տաճ. բոլոր քաղաքացի համար։ (Ինձ դրամ զրկողներն ապահովութեան համար՝ Նէշընըլ Պանքի չէք և կամ մընի օրտըր զրկելու են)։

Հայրենիքի մէջ ո՛ր և է գործ տեսնելու կամ գործարման օգնելու համար՝ պատրաստ եմ եղբոր Երաբուութիւն էՖ. Թ. ձեռամբ կատարել տալ։

ԼԱԻ ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ ՄԸ

Ճաշարանս, որ երեք տարիէ իվեր յաջողութիւնով շարունակեալ եմ, որոյ յաճախորդները բացի հայերէ՛ գերմանացի և տեղացի են, տիկնոջս մահուան առթիւ ոտապուած եմ վաճառել։ Ետ շահաւոր գործ է ժրջան և ճարպիկ մարդու մը համար. մանաւանդ յարմար է մուսոնացեալի մը։ Տեղս կը բողբոջուի խոհանոցէ, սեղանատուէէ, պէյսիթէ և մէկ բնակելու սենեակէ։ Ամսական վարձքըն է 16 սողար։ Գնողը եթէ կարօտի՝ կը խոտտանամ իրեն հետ կենալ այնքան տանն՝ որքան պէտք է իրեն սորվեցունելու գործին բոլոր պարագաները։ Ուզողներ կրնան դիմել Պր. Ա. Թագուորեանի։

343 Իսթ 34րդ Փողոց։

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Կար ատեն մը երբ հեռագրով երկաթ թելին մէջէն խօսիլը անհաւատալի էր, գաղափարը ծիծաղելի էր...

Անցեալ Կիրակի երեկոյ լորէնսի Հնչակեան մասնաճիւղն հրապարակաւ ին ժողով մը ունեցաւ: 300ի մօտ ազգայինք խոնուած էին սրահին մէջ...

Սէրը բնութեան խորանն է, որուն առջև կը ծնրադրէ ամբողջ մարդկութիւնը: Կեանքի մէջ էն դժուար բանը սիրախարքը ըլլալն է:

ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ
ՏԻԳՐԻՍԻ Տպարանը փոխադրուեցաւ: Նամակ կամ ծրար ղրկել հետեւեալ հասցէին: Q. B. CHURJIAN 301 E. 34th St. N. Y. City

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Ամեն անոնք որ կուզեն ազգային Հին և նոր կեանքին, ազգային ու յեղափոխական գործունէութիւններու անցեալ ու ներկայ ուղղութիւններուն և Եւրոպական քաղաքականութեան տեղեակ ըլլալ խորաթափանց կերպով, անոնք որ կը սիրեն խիստ չափեկան գուարձալիքներ կարգաւ, անոնք որք կը փափաքին ներկայ ամենաճիտալից ու գեղեցիկ գործերէ արտագրուած փառաւոր ծաղիկներով պնդել իրենց միտքը, սիրաբ և հոգին, անոնք որ կուզեն գրական ճիւղ ու վսեմ ներշնչումներով գարնանային արդիւնաբեր կեանք մը ունենալ, «ՆՈՐ ԿԵԱՆՔ» ԿՍՐԴԱԼՈՒ ԵՆ:

Նոր կեանքի նիւ Երբէք գործակալն է Պրն. Անտոն Թագուորեան, և հասցէն՝ 343 Իսթ 34րդ Փողոց: Ուղղները շատ մը գիւրուածեանց համար կրնան անոր զիմել նամակաւ կամ անձամբ:

Նոր կեանքի բաժանորդներուն «Մարտ» ձրի կը ղրկուի:

Լոնտոնի գործակալութեան հասցէն է՝ L. Frank, 309 Ladbroke Grove London W,

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԿԱԼՈՒԹԻՒՆ Ս. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ ԵՒ Յ. ՄԻՍՍԱԲԵԱՆ ԸՆԿ. 202 Իսթ 32րդ Փողոց Ն. Ե.

Ի գիտութիւն արեւելեան գորգեր վաճառողաց ու նորագողաց կը ծանուցանենք թէ՛ գորգերու եզերքները գրուելու նիւթ և ամեն գոյներով բուրգ կը վաճառենք չափաւոր գներով: Երկրորդ՝ մեր օֆիսին մէջ նախնականէն եկած յանձնարարութիւններն փութով կը կատարենք թէ քաղաքիս և թէ Պոլսոյ համար բերելու, ղրկելու, գանձելու, վճարելու, գնելու և վաճառելու ամեն գործերը կընենք գիւրամատչելի պայմաններով:

Նամակ և այլն ուղղել հետեւեալ հասցէին: Ս. Փ. Գալուստեան 202 E. 32d St. N. Y. City

ՆՅԱՆ ԱՔԳԱՐԵԱՆ ՕՃԱՌԱՎԱՃԱՌ

452 Ուէսթ 39րդ Փողոց, Նիւ Եորք կը ծանուցանէ Հայ հասարակութեան թէ զուտ և ընտիր նիւթերէ այլևայլ տեսակ օճառներ (սպօն) կը շինէ իր յատուկ գրութեամբ: Այս տեսակներուն մին՝ Հալէպի սպօնէն ալ աւելի մաքուր և զերբազործածելի է: Այս օճառները աղաք գիւրութեամբ կը մաքրեն, մորթը կահուղ կը պահեն ու հանդերձները շին փնտրեն:

Այս պատուական օճառներուն կտորը կը ծախենք 5 սենթի և հարկը հատը երեք տոլար ու կէսի: Փորձ մը միայն բաւական է մեր ճառներուն արժէքը գնահատել: Նամակ և այլն ուղղել կամ անձամբ գիւրմել վերոյիշեալ հասցէին:

ՍՕՅԼԱՆ ԵՒ ԱՌԱՔԵԼԵԱՆ Պղնձագործ

441 Ուէսթ 26րդ Փողոց, Նիւ Եորք Ուէսթ 26րդ Փողոց, Նիւ Եորք Այս գործարանին մէջ կը շինենք գեղեցիկ պղնձեղէն անօթներ, սեղանատան, խոհանոցի և տան մէջ գործածելի ամեն տեսակ կարասիները նաեւ Հիները կը նորոգենք և կը կը կայսեկենք (սալայ): Թիւրքիայէն և Պարսկաստանէն բերուած հնութիւններու իրական նմանութիւնը կը շինենք: Տրուած ասպարանքները կը կատարենք ամենայն ճշգրտութեամբ Մեր գները խիստ չափաւոր են:



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

Արեւելեան և Տաճկական Ապրանքաց Այս վաճառատունն էր տեսալին մէջ ամենամեծն է Նիւ Եորք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ ասեղնագործներ, սեղանի, մէնթըլի, փիտնոյի ևն. մետաքսեայ և ոսկեթել ծածկողներ, Դամասկոսի վարագոյրներ, Բերկոյի աղապանի, Քէֆիա, ևն. ևն.:

Հայ վաճառականք կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք փութով և խնամօք կը կատարուին: Գրանին չափաւոր և սպորանքներն լաւաւ լինելով՝ ուրիշ ո՛ր է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՏՆԵՆ Գրեց Տքթ. Ն. Տաղաւարեան

Կ. Պոլսոյ—Տպագրութիւն Պէրպէրեան 1898

Այս կարեւոր աշխատութիւնն կը պարունակէ 510 երեսներ. յանձնարարուած է կեդրոնական վարչութեան Ուսումնական խորհրդի կողմէն, ու գնահատուած է ազգային ընդհանուր մամուլէն: Թանգարան մը կատարեալ չէ տուանց այս կարեւոր հատորին:

Կը ծախուի Խմբագրութեան քով: Դին Մէկ Տօլար միայն:

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՇ ԵՊԱՐՎԱՃԱՌԱՍՈՒՆ Ա. Գրուելըգեանի

Թիւ 313 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք Պատիւ ունի ծանուցանել թէ սա խանութը բացուեցաւ շարժուածէջ՝ տեղական և արեւելեան ամէն տեսակ նպարեղէններով: Ապրանք թարմ լինելն ու գներու չափաւորութիւնը ծանուցանելու համար կը հրաւիրուին Հայերն գէթ միանգամ փորձել. մէկ փորձը բաւական է յաճախորդը մըջանձնական ընելու:

Մէկ գին, աման գին. քիչ շահ, շատ առեւտուր: Սա է մեր նշանաբան:

ՆԵՐՍԷՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ՄԱՐԿԵՐ Մ. ԹՈՒՆՄԱՆԵԱՆ


20 1/2 Հըստըն Փողոց, Պոսթըն, Մասս. Միակ Հայ նպարավաճառ ի Պոսթըն ի գիտութիւն Պոսթընի և շրջակայի հայերուն կը յայտարարենք թէ նպարեղէններու նոր խանութ մը բացած ենք. ուր կը գտնուի ամեն տեսակ ընտիր նպարեղէններ. օրինակ. պուրղուր, ծեծած, սոս, սիսեռ, պամեայ, արեւելեան ձեռք աղցուած սուրճ (խահուէ), Պայսերի պատարմայ, եսփարախ և այլն:

Ուրիշ քաղաքներէ յանձնարարութիւնք փութով և ճշգրի կը կատարուին՝ գոհացուցիչ գներով:

Փորձեցէք անգամ մը և գոհ պիտի մնաք:

Կը վաճառեն նաեւ Բաֆֆի գործերը իրենց սովորական գներով: 12-4

Հ Ի Բ Զ Օ Լ Ս. ՄԱՍԻ ԴԵՂ



Կը գործնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձել բաւական է սա գեղջին արժէքը գիտնալու համար արեւելեան խոսակցի պատրաստած է յոյժ հաճելի միջոցով:


Կը ծախուի րո լոր գեղադործներուն քով: Հին 50 Ալէն միայն:

Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ ընկերութենէն:

Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարակեանի քով, թիւ 45 Էքսէյնճ ըսթրիթ, Ուսթըր, Մասս:

Ա Բ Ր Ա Հ Ա Մ Ս Ա Հ Ա Ս Ի

Արտածիչ և ներածիչ Արեւելեան ամեն տեսակ ըմպելիաց եւ զանազան նպարեղիւնաց:



Թիւ 92 Ուաշինգթըն փողոց և 23 Բէքթըր փողոց, Նիւ Եորք: Խմելը փաստաբար է թէ և բայց զուտ ու մաքուրը գործածելը օգտակար է: Խմէ, գինի, օշի բայց քիչ, եւ մաքուրը, զուտը կամ հիշ:

Իմ Արեւելքէ բերել տուած օղին ու մասթիքան չի կրնար գերազանցուիլ, զի մեր յատուկ գործարանի մէջ պատրաստուած է՝ եղբորս անմիջական հսկողութեան տակ: Իմ Հին ու նոր գինիներ կրնան գոհ ընել ամեն ոք:

Նպարեղէններու մէջ առաջնակարգ տեղ մը կը զբաղէ իմ վաճառատուն: Իմ ներածիչ տուած ապրանքներս սակաւ կը հասնին Արեւելքէն եւ կը վաճառուին շուտով: Ունիմ ամեն տեսակ արեւելեան նպարեղէններ շաքարեղէններ, գէյթուս, ձիթաբաղ, նէրկիլէ և անոր յարակից պարագաները, թրքական ծխախոտ, սիկարէթ ևն. ևն. Ոչ միայն մեր ապրանքները ընտիր են, այլ գներն համեմատաբար գիւրամատչելի են ամեն դասակարգի անձանց համար:

Մեր գրից ու անկեղծութեան վրայ քաղափար առնել ուղղի նոր յաճախորդներուն՝ կրնանք ծանօթ հայերէ վիպութիւններ ղրկել:

Եանձնարարութիւնք գուրուի քաղաքներէ ճշգրի կը կատարուին: Ամեն հրամանի հետ գնայի գէթ մէկ տասներորդ մասը գրուելու է կանխիկ, իսկ մնացեալը Մի. 0. Տի:

ՏՊԱՐԱՆ ՏԻԳՐԻՍԻ

Այս տպարանի մէջ կը տպագրուեն թէ՛ Հայերէն և թէ՛ Անգլիերէն լեզուաւ ամեն տեսակ այցեամս, նամակագրութիւն, հրատարակիչ, շրջաբերականներ, տետրակներ ևն. տըպագրութիւնն՝ մաքուր: Ուրիշ քաղաքներէ եկող յանձնարարութիւնք կը կատարուին փութով ու խնամով:

ՄԱՍՈՒ ԳՐԻՔԻՐ

Լրագրոյ խմբագրութիւնն վեհատիկի Միւլիարեանց Տպարանին հետ մասնաւոր կարգադրութիւն մը բրած է՝ նոյն տպարանէն իր լոյս ընծայուած գրքերէն Ամերիկայի Հայոց վաճառու համար: Ո՛ր է գիրք ստանալ փափաքողները կրնան ղրկել մեզ անձամբ կամ նամակաւ: